Հաստատված է
«Այդի Բանկ» ՓԲԸ վարչության
16/04/2026 **թվականի** N 161-L **որոշմամբ**
Գործում է 2026 **թվականի մայիսի** 15-**ից**

Ամփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխված լինել:
Եթե Դուք ամփոփագրին ծանոթանում եք Բանկի կայքում, խնդրում ենք ուշադրություն դարձնել տեղեկատվական ամփոփագրի գործողության ամսաթվին:
Եթե Դուք ամփոփագրին ծանոթանում եք թղթային տարբերակով, մանրամասն տեղեկությունների համար խնդրում ենք այցելել Բանկի ինտերնետային կայք՝ www.idbank.am հասցեով (ուշադրություն դարձնելով տեղեկատվական ամփոփագրի գործողության ամսաթվին), դիմել Բանկի ցանկացած մասնաճյուղ կամ զանգահարել Բանկի Հեռախոսազանգերի կենտրոն՝ (+37410) 59 33 33 , (+37460) 27 33 33 հեռախոսահամարներով:

ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ՎԱՐԿԵՐԻ ՎԱՐԿԱՌՈՒՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓԱԹԵԹ -IDHOME

Ընդհանուր պայմաններ

1. ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ՎԱՐԿԵՐ

1.	**Վարկի տարեկան անվանական տոկոսադրույք**	Հաստատուն տոկոսադրույք. Մինչև 13.25 % Բարելավվող պայման*՝ սկսած 4.99%-ից *Բարելավվող պայմանի գործողության ժամկետը և դրույքը սահմանվում է՝ ելնելով Բանկի և կառուցապատողի համագործակցության պայմաններից Լողացող տոկոսադրույք. Համաձայն «Անշարժ գույքի ձեռքբերման նպատակով տրամադրվող հիփոթեքային վարկերի» տեղեկատվական ամփոփագրի
2.	**Վարկի փաստացի տոկոսադրույք**	5.1%-24%* *Ընդ որում IDHome փաթեթով տրամադրվող հիփոթեքային վարկերի փաստացի տոկոսադրույքը կարող է փոփոխվել կախված Բանկի և կառուցապատողի համագործակցության պայմաններից, որը չի կարող գերազանցել վերոնշյալ առավելագույն տոկոսադրույքը:
3.	**Արժույթ**	ՀՀ դրամ
4.	**Այլ պայմաններ**	Համաձայն բանկում գործող «Անշարժ գույքի ձեռքբերման նպատակով տրամադրվող հիփոթեքային վարկերի» տեղեկատվական տեղեկատվական ամփոփագրի IDhome ծառայությունների փաթեթի շրջանակներում հիփոթեքային վարկը տրամադրվում է Բանկի սեփական ռեսուրսներով:

	2. ROCKET LINE[1]	
5.	**Վարկի առավելագույն գումար**	Հիփոթեքային վարկի մինչև 10%-ի չափով, ոչ ավել, քան 10 000 000 ՀՀ դրամ
6.	**Այլ պայմաններ**	Համաձայն Բանկում գործող ROCKET LINE վարկի/վարկային սահմանաչափի տեղեկատվական ամփոփագրի
	3. ՎԱՐԿԱՅԻՆ ԳԻԾ[1]	
7.	**Վարկի առավելագույն գումար**	Հիփոթեքային վարկի մինչև 5%-ի չափով, ոչ ավել, քան 5 000 000 ՀՀ դրամ
8.	**Այլ պայմաններ**	Համաձայն Բանկում գործող Վարկային գծի տեղեկատվական ամփոփագրի (փաթեթի շրջանակներում տրամադրվող վարկային գիծը անկախ գումարի չափից տրամադրվում է Visa Platinum քարտատեսակով և դրան համապատասխան պայմաններով, ինչպես նաև հաճախորդի ցանկությամբ նշված ամփոփագրով սահմանված քարտատեսակներով՝ դրանց համապատասխան պայմաններով)
	4. ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՔԱՐՏ	
9.	**Քարտատեսակ**	Visa Platinum
10.	**Քարտային հաշվի սպասարկման տարեկան վճար**	անվճար
11.	**Այլ պայմաններ**	Համաձայն Բանկում գործող **Կրեդիտային վճարային քարտերի** տեղեկատվական ամփոփագրի
	5. ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐ	
12.	**Հաշվի արժույթ**	AMD, USD, RUR, EUR
13.	**Հաշվի բացում**	անվճար
14.	**Այլ պայմաններ**	Համաձայն Բանկում գործող «Բանկային հաշիվների, փոխանցումների «Այդի Բանկ» ՓԲԸ կողմից մատուցվող այլ ծառայությունների սակագների» տեղեկատվական ամփոփագրի
	6. ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ՀԱՇԻՎ	
15.	**Հաշվի արժույթ**	AMD
16.	**Տոկոսադրույք**	Բանկում գործող տոկոսադրույք +0,5%
17.	**Այլ պայմաններ**	Համաձայն Բանկում գործող Խնայողական հաշվի տեղեկատվական ամփոփագրի

	7. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ	
18.	**Տեսակը**	Finance Insurance
19.	**Ապահովագրավճար**	անվճար
20.	**Ապահովագրական ծածկույթ**	**Ներառվող ռիսկերը**

[1] Այդի Բանկ ՓԲԸ-ում վարկառուի անգրավ վարկերի հանրագումարը չի կարող գերազանցել 10 000 000 ՀՀ դրամը:

		1. Գործազրկության ապահովագրություն 2. Դժբախտ պատահարներից ապահովագրություն 3. Կրիտիկական հիվանդություններից ապահովագրություն 4. Հոսպիտալացման ռիսկից ապահովագրություն Մանրամասն
8. ՀԵՌԱՎԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ		
21.	**Online/Mobile բանկինգ**	անվճար
ՓԱԹԵԹԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՍԱԿԱԳՆԵՐ		
22.	**Փաթեթի շրջանակներում հիփոթեքային վարկի տրամադրման վճար**	20 000 ՀՀ դրամ, եթե վարկի տարեկան տոկոսադրույքը 7,99% - 11% 50 000 ՀՀ դրամ , եթե վարկի տարեկան տոկոսադրույքը 4,99% - 6,99% Վճարը գանձվում է միանվագ՝ հիփոթեքային վարկի տրամադրման պահին
23.	**փաթեթից օգտվելու ամսական վճար**	2 000 ՀՀ դրամ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. **Հաճախորդի կողմից փաթեթից հրաժարվելու դեպքում փաթեթում ընդգրկված ծառայությունները մատուցվում են համաձայն Բանկում գործող սակագների:**
2. **Կողմերի միջև ծագած վեճերը կարող են լուծվել դատական կարգով կամ ֆինանսական համակարգի հաշտարարի միջոցով («Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով), հասցե՝ 0010 ք. Երևան, Մ. խորենացու փող. 15, «Էլիտ Պլազա» բիզնես կենտրոն 7-րդ հարկ, էլ. փոստ՝ info@fsm.am, հեռախոս՝ (+37460) 70 11 11, ֆաքս՝ (+37410) 58 24 21: Ընդ որում, եթե գույքային պահանջի չափը չի գերազանցում 500,000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը, ապա ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները չեն կարող վիճարկվել Բանկի կողմից:**
3. **Բանկը «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով կարող է «Ճանաչիր քո հաճախորդին» սկզբունքի հիման վրա պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ տեղեկություններ:**
4. **Օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտի (FATCA) հիման վրա ԱՄՆ-ի հետ կնքած համաձայնագրի համաձայն՝ Բանկը հաճախորդի ԱՄՆ հարկատու հանդիսանալու հանգամանքը պարզելու համար կարող է լրացուցիչ տեղեկություններ հավաքագրել:**
5. **Հաճախորդը իրավունք ունի Բանկի հետ հաղորդակցվել իր նախընտրած տարբերակով՝ էլ. փոստ կամ փոստային կապ: Էլեկտրոնային եղանակով տեղեկատվության ստացումը ամենահարմարավետն է: Այն հասանելի է 24/7 ռեժիմով, զերծ է թղթային տեղեկատվության կորստի ռիսկերից և ապահովում է գաղտնիություն:**
6. **Բանկի մասնաճյուղերի և բանկոմատների ցանկին, վերջիններիս գործունեության հասցեներին և աշխատանքային ժամերին կարող եք ծանոթանալ հետևյալ հղմամբ՝ Մասնաճյուղեր և բանկոմատներ**
7. **Բանկի կողմից հեռավար սպասարկումն իրականացվում է IDBanking.am առցանց համակարգի միջոցով: Բանկի հեռավար սպասարկման ծառայությունների մատուցման կարգն ու պայմանները ներկայացված են «Հեռավար բանկային ծառայությունների մատուցման հրապարակային պայմաններում»:**

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ. ԲԱՆԿԸ ՎԵՐԱՀՍԿՎՈՒՄ Է ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ